զան և թաթաղուն գոլով, և առ այլս թափանցել չանայ զխաղաղասիրութեանն օրէն, և մինչ ի մեր խղճալի ազգս հասեալ զհրաժարականն ողջոյն տալոց իցէ խաղաղութեան. քա՛ւ լիցի, Տէր իմ, թէ ի ժամանակի դեր աստուածասիրութեան ձերոյ հիմնեցեալն տապալիցի. քանզի յուսամք և յաւուրս քոյոյ բարեպաշտութեան հաստիլ առաւելապէս, որպէս եւ յաւուրս նախնոյն քո քրիստոսասիրի ամենիմաստի եւ բարեպաշտի Վիլլանովային. ուրեմն աղաչեմք ի ձեռն քոյդ բարեսիրութեանդ, զչարսն տախտակաց նաւակի խաղաղութեան մերոյ. իբր բեւեռօք սիրոյդ պնդել և անխախտ յօրինել, և զինի բեւեռելոցդ սիրով, և նաւթիւ և ձիթով ղջրանցական տեղիս գծամերձից փակել քոյովդ աստուածասիրութեամբ. զի թերեւս նաւակ սիրոյն եւ խաղաղութեան ի նաւահանգիստն արքայութեան յաջողակ հոգւով ներշնչութեան Հոգւոյն Սրբոյ փութացէս ժամանիլ, որում զաստուածսիրութիւնդ զինի երկար կենաց աստէն և բարերջանկութեան արժանի արասցէ Յիսուս Քրիստոս անդր հատաքման ի տեսութեան իւրում, ամէն։

Ի վախճան գրոյս խնդրի ի դեր աստուածասիրութենէդ, ո՛վ ամենապայծառ իշխան, գրել աստ եղելոց եղբարց մերոց սիրով կեալ ընդ մերոյս խղճութեան և յանձնել եւս զմեզ ի սէր նոցա, առ ի հաստատուն պահել զպատուղ նախնոյդ եւ քոյոյ բարեպաշտութեան. ըստ որում և մեք միշտ ի մտի ունիմք և ի բերանոջ զձերդ աստուածսիրութիւն ի յաղօթս. վերստին ողջ լեր ի Տէր Յիսուս անձախորդ կենօք յամերամ ժամանակս։

Ծամի Տեառն 1742. Հոկտեմբեր 26. ի Ս. Երուսաղէմ ի վիճակի ժառանգութեան մերոյ որ ի Ս. Յակոբ։

Ի Թղթոց աստի և յայսքան աղաչանաց թէ զինչ արդիւնս չահեցաւ Գրիգոր Պատրիարք, չէ յայտ. սակայն Լատին կղերք երբէք չզինչան անսալ բանից դատաւորին, որոց պատուիրէր հանդարտիլ և կեալ ի խաղաղութեան. եւ առ ի պատրուակելոյ գյանցանս իւրեանց, բողոք կալան ի Դուռն Արքայի ի ձեռն դեսպանին Գաղղիոյ, որպէս թէ այլազգիք երուսաղէմի նեղեալ եւ տառապեալ իցեն զնոսա։ Եւ ըստ գանկատելոյ նոցա, գրեցաւ հրո-